



ԿԱՐՕ ՏԵՄԻՐՃԵԱՆ
1937-2006

Հ.Մ.Ը.Մ-ի երկարամեայ անդամ կուսակցական ընկեր Կարո Տեմիրճեան յետ կարճատեւ հիւանդութեան անդարձ մեկնեցաւ մեզմէ 4 Յունիս 2006-ին.

Ընկերոջ թաղման արարողութիւնը տեղի ունեցաւ Ս. Էջմիածնոյ Ս. Խորանի առաջ Յուլիս 5ի ժամը 3:30ին որմէ ետքը ընկերոջ մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկիչեայ Հայոց Գերեզմանատան մէջ՝ Սիրոն Լեռ:

Ընկերոջ դագաղին շուրջ Հ.Մ.Ը.Մ-ի թէ Հ.Յ.Դ-ի անունով խօսք առաւ ընկ. Սերոբ Սահակեան ու փոխանցեց միութեան թէ կուսակցութեան ցաւակցութիւնները զուգահեռաբար դրուատելով ու վեր առնելով ընկերոջ արժանիքները:

Ընկերոջ յուղարկաւորութենէն ետք հոգեսուրճ սպասարկուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի սրահին մէջ:

Ընկ. Սերոբ Սահակեանի խօսքը հանգուցեալ Կարո Տեմիրճեանի դամբանի վերեւ:-

"Չկար Կարօն տխուր պատեց ամէնքին... Երանի՛ է անոր հոգուն որ զոհ դարձաւ այս կռուին:": Այս տողերը նուիրուած են Դաշնակցութեան հիմնադիր Ռոստոմի եղբոր Կարօյին, որը մօտ 110 տարիներ առաջ կը նահատակուէր Խանասորի արշաւանքին ընթացքին մեծ ցաւ եւ մանաւանդ ցնցում պատճառելով իր ընկերներուն, որոնք արշաւանքի ակարտէն շատ ուշ կ'անդրադարձային Կարօի կորուստին, հարցը մէջտեղ դնելով թէ մահը ինչպէս գտաւ Կարօյին նման անխոցելի հերոսին:

Նոյնպիսի զգացում մը, ապրում մը, ունեցայ շուար ու շփոթ հոգեվիճակ մը ապրեցայ Կարօ՝ այն պահուն երբ լսեցի մահուանդ բօթը, կարծես այդ ըլլար շրմբալից ապտակ մը ինձ, ընտանիքիդ, ընկերներուդ, կուսակցութեանդ:

Այդ Կարօ, դու լուռ էիր բայց եւ այնպէս հոս հոն շրջող մտմտութիւններէն կարելի էր եզրակացնել որ անհանգիստ ես, մի գուցէ կը տարապիս, լուռ կը ցաւիս: Տղաքն ալ իրենց կարգին կ'ուզէին ամէն բան նորմալ ձեւացնել, քանզի կ'երեւայ թէ հարազատ նկարագրիդ թէ բնաւորութեանդ, տղոց ապսպրած էիր թէ "տղաքս ամէն մարդ իր տարտն ունի, թոյլ տուէք որ կրակն իր ինկած տեղն այրի ու մոխրանայ":

Այդ այդպես է Կարօ, դժբախտաբար այդպես է, բայց կ'ըլլայ մը այսքան արագ, այսքան յանկարծական, կարծես շանթահար կորուստդ:

Ինչին էր 'աճալան' կարելի չ'էր այսպես ընկերական սեղան մը վերջին ընթրիք մը, արդեօք շա՞տն է այդ տեր Աստուած:

Արդարեւ սիրելի սզակիրներ պահուս կը գտնուինք մեր շատ շատերուն սիրելի եղբոր թէ ընկերոջ Կարօյի անշնչացած մարմնի շուրջ: Սառն հողին ենք յանձնելու Կարօն, որուն տարիներու Հ.Ս.Ը.Մ.ական մեծ եղբոր թէ կուսակցական ընկերի տաք շունչն ու ազնիւ շուքն վայելելու հաճոյքն, աւելի պատիւն են ունեցած:

Հողին ենք յանձնելու Կարօն, որը Հ.Ս.Ը.Մ.ական թէ Դաշնակցական է ծնած ոչ թէ անդամագրուած: Կարօյի համար Դաշնակցութիւնը լոկ գաղափարախօսութիւն թէ Հայ ազգային բարոյախօսական չէր այլ պապենական ժառանգ, որուն վրայ պէտք է գուրգուրալ ու սերունդ ան սերունդ փոխանցել:

Ողորմած հայրս յաճախ երբ Հ.Ս.Ը.Մ.ի ընտանիքի կազմութեան թէ սիւներու մասին խօսք կ'ըլլար ան կ'ըսէր "օրինակ Տէմիրճեանները անոնք Հ.Ս.Ը.Մ.ի ողնաշարին կը պատկանին, դուն չես գիտէր անոնց մայրը որն Յ.Օ.Ս.ի տարիներու նուիրեալ վարչուհին թէ ատենապետուհին էր եղած":

Իրօք, այդպես էր Կարօն, Հ.Ս.Ը.Մ.ի քաղց թէ սառ օրերու, փոթորկոտ թէ խաղաղ շրջաներու խրախճանքի թէ ժողովներու տիրական ներկան էր, իսկ եթէ բացակայ էր անոր բացակայութիւնը անբանին զգալի էր որ հարց կը ծագէր ընկերներուն միջեւ թէ ինչու Կարօն չկար, Տէմիրը ո՞ւր էր: Կարծէք Կարօյի ներկայութիւնը միայն, կերաշխաւորէր ժողովին օրինականութիւնը թէ խրախճանքին յաջողութիւնը:

Կարօն մասնաւոր գրոց բռոց չէր բայց անպայման իր խօսքը իր ուղղիդ ու անկեղծ շեշտակի ու անկողմնակալ խօսքը մեծ կշիռ ուներ բոլորի համար:

Մինչեւ օրս ալ իմ ականջի կ'արձագանքէ կարօյի այն խօսքը արտասանուած փոթորկոտ ժողովի մը ընթացքին երբ Կարօն իրեն յատուկ զուսպ հաւասարակշռութեամբ կ'ըսէր " ընկերներ, ճիշդ է որ գործելէ առաջ տասը պէտք է մտածել, խորհիլ, խորհրդակցիլ ապա գործել, բայց ոչ թէ տեղի անտեղի տգէտ բանգէտ խօսքերու երկարածութեամբ գործ Ի սկզբանէ թաղել": Այլ խօսքով, Կարօն կու գար ըսելու երբ պիտի հարուածես հարուածէ մի խօսիր, քանզի վերջապէս կը պատկանիս կուսակցութեան մը որ իր գործով միայն կրնայ պարծենալ:

Այսուհանդերձ, հակառակ Կարօյի յաճախ խստապահանջ կեցուածքին թէ նկարագրին, Կարօն խորքին մէջ շատ ընկերային, մեղմ ու ազնուական նկարագրի տիպարն էր:

Կարօյի գլխէն շատ բան էր անցեր: Կեանքին դառնը թէ քաղցրը ան յաճախ էր համտեսել, բայց Կարօն իր կեանքի գրքին բոլոր էջերը կը թղթատէր նոյն հայրական ժպիտով ու անծածկելի հիւմորով ու այդ գրքի մէջ երեւցող բոլոր դէմքերը, լաւն թէ վատն, Կարօն կը ներկայացներ որպէս հրեշտակներ ուր ինք մեր աչքին կը ներկայանար վիթխարի հսկայ մը, բարութեան ասպետ մը:

Արդարեւ, սիրելիներ, պիտի ըսեմ այս ճակատագիրը ինչ սել է Աստուած, արդեօք թամբանի մոմուռով է գրուած: Այս խօսքերը կը վերաբերին մահու հոգեառ հրեշտակը դիմաւորող թոքախտաւոր 21ամեայ երիտասարդ

հանճառեղ բանաստեղծ Պետրոս Դուրեանին, որը կը մերժեր մահը որովհետեւ թեռ հազիւ կեանքեն շեմն էր թեւակոխած եւ ասա երկնաւորը չգիտեն ինչու կը հրահանգէր անոր թողուլ ամէն ինչ եւ հետեւիլ հոգեառ հրեշտակին ցուցմունքին:

Այօ, անկախ տարաբախտ Դուրեանէ, մեր Կարօն գէշ լաւ 70 գարուններ էր տեսած մի գուցէ որպէս արարած մարդ թէ ընտանիքի հայր որոշ ճամբայ էր կտրած, այսուամենայնիւ սեւ ճակատագրին դէմ բողոքը Կարօյի նկատմամբ ալ կը մնայ ի գօրու, որովհետեւ ուրիշ պարտք մը կը մնար անվաճառ, ազգային ճիտի պարտքը: Երազի մը իրագործումը կը մնար կարծես ականուած վթարուած: Երազ մը, որը ամէն Հայու ու Դաշնակցականի սրբազան իղձն է տուն վերադարձի Հայոց տուն, Հայաստան վերադարձի մարմանջը, որը Կարօն բացարար մեր շրջանի մէջ եւ քաջաբար նախաձեռնեց շատ մը առումներով: Ջոճուխին մէկը արդէն քանի մը տարիներէ ի վեր հոն Հայաստան կ'ուսանէր կը սորվէր կը պրպտէր կը յարմարուէր: Միւսը նոյնպէս իր հողաթափին մէկը Հայաստան էր մոռցած անելի ձգած ու օր մը հոս օր մը հոն տուն տեղ աշխատանքի ծրագրեր, կը մշակէր, եթէ ողորմած Տէր Աստուածը մի քիչ համբերատար ըլլար մեր Կարօն վեհապանձ Արարատի կողքին, Տէմիրճեան անուն երկու սիրասուն Հայ օճախներու կազմութեան գեր երջանիկ վկան պիտի դառնար ու պիտի ըսէր "Փառք քեզ Տէր": Եթէ այդ տար Աստուած, տար Աստուած...

Բայց անաւարտ մնաց մնաց գէթ մեր Կարօյի համար անաւարտ մնաց ազգային հայրենասիրական շքերթը՝ դէպի Երեւան քարաւանը:

Այսու ամենայնիւ կու գանք վկայախօսելու, թէ շրջանիս Հ.Յ.Դ. եւ Հ.Ս.Ը.Մ.ի ընտրանիի լաւագոյն ներկայացուցիչներէն էիր դուն Կարօ՝ եւ արդէն այդ հանգամանքիդ բերումով դէպի երկիր կարգախօսին խիզախ յառ աջապահներէն մին ամբողջ 70 տարի, եւ կու գանք այս հրաժեշտի պահուն քու ձգած անանդիդ համարժէք մեր երախտիքը բերելու եւ այդ որպէս քաղցր յիշատակ մեր յաջորդաց փոխանձելու:

Կարօ, վստահ եմ թէ մեզ հետ եւ միաժամանակ քու ժառանգորդները անմիջական ժառանգորդներդ յանձինս Օհանին, Վիգէնին, Վազգէնին, պիտի գիտնան վառ պահել քու յիշատակդ ու արժեցնեն ու ապրին քու զաւակները ըլլալու հպարտանքը:

Կարօ, երթաս բարով, հիմա դուն կրնաս հանգիստ գնալ ու գտնալ հոն քեզ նմանները, որոնք հոն անելի են քան հոս: Իսկ մենք հոս պիտի աղօթենք եւ խնդրենք նոյն երկնաւորէն, որ քեզ հանդէպ ժլատ էր գտնուած չըսելու համար անխիղճ, որ հողը թեթեւ գայ վրայ:

Սիրելի Կարօ, որպէս վերջին խօսք թէ մխիթարանք ըսեն հակառակ անոր որ պիտի ուզէիր եւ ուզէինք որ այս քու հողակոյտը Արարատի շուքով զովանար, կու գամ քեզ փսփսալու թէ երկնաւոր ձայն մը կ'ըսէ թէ "երանի անոնց որ կը ննջեն ի Սիոն", ես պիտի ըսեն Հայոց Սիոն, եւ թէ այդ երանութեան համար գէթ փառք:

Եղբ. Կարօ Տէմիրճեանի մահուան տխուր առթիւ հետեւեալները միութեանս ֆոնտին փոխանցեցին փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւններ:-

- Հ.Ս.Ը.Մ. Եաֆա
- Հ.Յ.Դ. Եաֆա
- Հ.Օ.Ս. Եաֆա
- Յոգեշ. Հայրիկ վրդ. Գալայճեան

Տեր եւ Տիկ. Աբգար Չագարեան
Տեր եւ Տիկ. Սարգիս Պոյաճեան
Տեր եւ Տիկ. Յարութ Նաճարեան
Տեր եւ Տիկ. Գան Ուրֆալի
Տեր եւ Տիկ. Աբգար Յակոբեան
Տեր եւ Տիկ. Գեորգ Ալէմեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Նաճարեան
Տեր եւ Տիկ. Մորիկ Աւետիսեան
Տեր եւ Տիկ. Յարութ Գասապեան
Տեր եւ Տիկ. Լութֆիկ Գասապեան
Տեր եւ Տիկ. Յովհաննէս Աբրահամեան
Տեր եւ Տիկ. Ալէքս Զաննա
Տեր եւ Տիկ. Մեսրոպ Գրիգորեան
Տեր եւ Տիկ. Խաչիկ Սարքարեան
Տեր եւ Տիկ. Դաւիթ Գեորգեան
Տեր եւ Տիկ. Թոնի Տէմիրճեան
Տեր եւ Տիկ. Կարօ Տըլտըլեան
Տեր եւ Տիկ. Գործ Թումայեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Անդրէասեան
Տեր եւ Տիկ. Յարութ Պետրոսեան
Տեր եւ Տիկ. Գուրգէն Պաղամեան
Տեր եւ Տիկ. Պերճ Գուրուճեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Փանոսեան
Տեր եւ Տիկ. Յովհաննէս Տէր Պետրոսեան
Տեր եւ Տիկ. Գառնիկ Պալըքճեան
Տեր եւ Տիկ. Գեորգ Զինտոյեան
Տեր եւ Տիկ. Գաբօ Տիքալիքեան
Տեր եւ Տիկ. Զամբար Տիքալիքեան
Տեր եւ Տիկ. Ժիրայր Գահքէճեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Շէօհմէլեան
Տեր եւ Տիկ. Պէնի Շէօհմէլեան
Տեր եւ Տիկ. Օհան Ղարիպեան (ԱՄՆ)
Տեր եւ Տիկ. Վահէ Ղարիպեան (ԱՄՆ)
Տեր եւ Տիկ. Յակոբ Թագաւորեան
Տեր եւ Տիկ. Մարտօ Նալպանտեան
Տեր եւ Տիկ. Արամ Խաչատուրեան
Տեր եւ Տիկ. Կարօ Գամպագեան
Տեր եւ Տիկ. Գեորգ Գահուէճեան
Տեր եւ Տիկ. Պարիս Աւետիսեան
Տեր եւ Տիկ. Գեորգ Նալպանտեան
Տեր եւ Տիկ. Զայկ Վանայեան
Տեր եւ Տիկ. Արմէն Վանայեան
Տեր եւ Տիկ. Ստեփան Տէր Վարդանեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Պաղտասարեան
Տեր եւ Տիկ. Սարգիս Գոյումճեան
Տեր եւ Տիկ. Նշան Պալեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Գալլճեան
Տեր եւ Տիկ. Ստեփան Յակոբեան
Տեր եւ Տիկ. Յովհաննէս Տըլտըլեան
Տեր եւ Տիկ. Սկրտիչ Գորուշեան
Տեր եւ Տիկ. Վարդան Տէր Մաթոսեան
Տեր եւ Տիկ. Գեորգ Զէքիմեան
Տեր եւ Տիկ. Զրանդ Օհաննէսեան
Տեր եւ Տիկ. Սարգիս Գարակէօզեան
Տեր եւ Տիկ. Շանթ Գասպարեան
Տեր եւ Տիկ. Սարգիս Մանուէլ Զասէսեան
Տեր եւ Տիկ. Մարիան Մանուէլ Զասէսեան
Տեր եւ Տիկ. Անդեաս Զինտոյեան

Տեր եւ Տիկ. Սարօ Նազգաշեան
Տեր եւ Տիկ. Վիգէն Գրիգորեան
Տեր եւ Տիկ. Սերոբ Սահակեան
Տեր եւ Տիկ. Վահէ Գասապեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Տըլտըլեան
Տեր եւ Տիկ. Գեորգ ճանսրգեան
Տեր եւ Տիկ. Նազար Պէնէեան
Տեր եւ Տիկ. Շուքրի Դիւղիւնճեան
Տեր եւ Տիկ. Լեւոն Օհաննէսեան
Տեր եւ Տիկ. Անթօն Նալպանտեան
Տեր եւ Տիկ. Տիգրան Նալպանտեան
Տեր եւ Տիկ. Վրէժ Պետրոսեան
Տեր եւ Տիկ. Ղազար Գեորգեան
Տեր եւ Տիկ. Գաբրիէլ Շահրիկեան
Տեր եւ Տիկ. Սարտիրոս Օտապաշեան
Տեր եւ Տիկ. Զոհրապ Արաքէլեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Արաքէլեան
Տեր եւ Տիկ. Յակոբ Յարութիւն Արաքէլեան
Տեր եւ Տիկ. Նազարէթ Ղազարեան
Տեր եւ Տիկ. Եղիա Տիգրանեան
Տեր եւ Տիկ. Տիգրան Թորոսեան
Տիկ. Արփիմէ Նազգաշեան
Տիկ. Մարի Կիրակոսեան եւ Ընտանիք
Տիկ. Մարի Տըլտըլեան
Տիկ. Մարթա Էլմաճեան
Տիկ. Դէրեզ Սեւգաղեան
Տիկ. Դէրեզ եւ Օր. Ռինա ճռնազեան
Տիկ. Օստթ Սալման
Տիկ. Մարի Պալըքճեան
Տիկ. Ինսաֆ Շէմէսեան
Տիկ. Նուէր Մէնէշեան
Տիկ. Մանուշակ Գահուէճեան
Տիկ. Լուսին Փանոսեան
Տիկ. Մարիժան Արաքէլեան
Տիկ. Անժել եւ Տիար Գառնիկ Պալըքճեան
Տօքթ. Անուշ Նազգաշեան
Տօքթ. Ատրիմէ Գարագաշեան
Տիար Զրաչ եւ Օր. Լիան Գրիգորեան
Տիար Յակոբ Սեւան
Տիար Յակոբ Մոմճեան
Տիար Դաւիթ Գաբլանեան
Տիար Տիգրան Պաքրճեան
Տիար Սողոմոն Թումայեան
Տիար Տիոն Լէի
Տիար Սալահ Ապը Սալէմ
Տիար Ռուբէն Գահուէճեան
Տիար Գեորգ եւ Օր. Աշխէն Զինդիլեան
Տիար Արսէն Աճէմեան
Օր. Մարի եւ Օր. Անգիմէ Գարակէօզեան
Օր. Արփիկ Գահուէճեան
Օր. Ժորժէ Աւագեան եւ Քոյրեր
Օր. Լուսին Փանոսեան
Մարի, Աշխէն եւ Պիաթրիս Տէմիրճեան
Պաղպուտերեան Ընտանիք
Մէլիտոսեան Ընտանիք
Կեճէկուշեան Ընտանիք
Մխճեան Ընտանիք